

Հաստատված է  
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի  
2018թ. հունիսի 26-ի թիվ 1/435-Ա որոշմամբ

### **ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**ԱՀԱՐԵԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՁԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ  
ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ  
ՍԱՌԵՑՄԱՆ, ՍԱՌԵՑՎԱԾ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

#### **Գլուխ 1. Ներածություն**

1. Սույն ուղեցույցն անդրադառնում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ, 11-րդ և 28-րդ հոդվածների, ինչպես նաև 2012թ. Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման գենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային ստանդարտներ սահմանող ՖԱԹՖ-ի 6-րդ և 7-րդ Հանձնարարականների շրջանակներում գույքի սառեցման և հասանելիության արգելման պարտականությանը և ընթացակարգին, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի (այսուհետ՝ ՄԱԿ ԱԽ) բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված և Լիազոր մարմնի նախաձեռնությամբ կամ օտարերկրյա իրավասու մարմինների խնդրանքի հիման վրա կազմված ցանկերում ներառված անձանց և կազմակերպությունների նույնականացման, ինչպես նաև սառեցված գույքի հաշվին վճարումների կատարման և այդ գույքի համալրման ընթացակարգին:

2. Սույն ուղեցույցի նպատակներից է սահմանել մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս ցանկերում ներառման որոշումների մասին անմիջապես տեղեկացնել Օրենքով սահմանված հաշվետվություն տրամադրող անձանց և պետական մարմիններին, ինչպես նաև ուղղորդել սառեցման մեխանիզմների շրջանակում որոշակի միջոցառումներ իրականացնելու պարտականություն ունեցող կողմերին, որոնց տիրապետման ներքո կարող է գտնվել թիրախային ֆինանսական պատժամիջոցների ենթակա գույք:

3. Սույն ուղեցույցը կենտրոնանում է այն կանխարգելիչ միջոցառումների վրա, որոնք անհրաժեշտ ու պարտադիր են ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց և կազմակերպություններին գույքի տրամադրումը, ինչպես նաև դրանց կողմից գույքի չթույլատրված օգտագործումն արգելելու նպատակով:

4. Սույն ուղեցույցում նախատեսված հասկացություններն ունեն Օրենքով և ՖԱԹՖ-ի Հանձնարարականներով սահմանված նշանակությունը:

## **Գլուխ 2. Սառեցման կամ հասանելիության արգելման ենթակա գույքը**

5. Սառեցման ենթակա գույքի կազմը սահմանված է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:

6. Սույն ուղեցույցով սահմանված կարգով սառեցման ենթակա է այն գույքը, որը.

ա) պատկանում է ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց կամ կազմակերպություններին կամ վերահսկվում է նրանց կողմից, ընդ որում այս պահանջը վերաբերում է ոչ միայն այն գույքին, որը կարող է առնչվել որոշակի ահաբեկչական կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման գործողության, ծրագրի կամ սպառնալիքի հետ,

բ) ամբողջությամբ կամ համատեղ կարգով, ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց կամ կազմակերպություններին կամ վերահսկվում է նրանց կողմից, և

գ) ստացվել կամ ձևավորվել է ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց կամ կազմակերպություններին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքից, ինչպես նաև

դ) պատկանում է ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց կամ կազմակերպությունների անունից կամ ցուցումով գործող անձանց և կազմակերպություններին:

7. Սույն ուղեցույցով սահմանված կարգով հասանելիության արգելման ենթակա գույք է ուղղակի կամ անուղղակի, ամբողջությամբ կամ համատեղ կարգով ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված

անձանց տրամադրվող գույքը, տնտեսական ռեսուրսները կամ ֆինանսական կամ այլ հարակից ծառայությունները, եթե դա ՄԱԿ ԱԽ համապատասխան բանաձևերի համաձայն արտոնված, լիազորված կամ որևէ այլ կերպ ծանուցված չէ:

### **Գլուխ 3. Գույքի սառեցման կամ հասանելիության արգելման ընթացակարգը**

8. Գույքի սառեցման նպատակով, Օրենքով սահմանված հաշվետվություն տրամադրող անձինք և պետական մարմինները պետք է.

ա) Հաճախորդի, իսկ պետական մարմինների դեպքում՝ օրենքով սահմանված գործառույթի իրականացման ընթացքում իրենց հետ առնչվող բոլոր անձանց և կազմակերպությունների նույնականացման տվյալները համադրեն ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց և կազմակերպությունների նույնականացման տվյալների հետ: Նույնականացման տվյալները սահմանվում են Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով:

Համադրումները կարող են իրականացվել ցանկացած եղանակով, այդ թվում՝ Լիազոր մարմնի պաշտոնական կայքէջում տեղադրված որոնման գործիքի միջոցով ([www.cba.am](http://www.cba.am)) կամ Լիազոր մարմնի կողմից մշակված համեմատական ալգորիթմի ավտոմատ ծրագրային համակարգով:

բ) Համադրելի նույնականացման տվյալներ (ներառյալ՝ Լիազոր մարմնի կողմից սահմանված նվազագույն քանակի նիշերի համընկնմամբ) հայտնաբերելու դեպքում անմիջապես և առանց ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց կամ կազմակերպություններին նախապես տեղեկացնելու իրականացնեն գույքի սառեցում՝ անորոշ ժամկետով:

Հաշվետվություն տրամադրող անձինք գույքը սառեցնելու դեպքում պետք է Լիազոր մարմնին տրամադրեն կասկածելի գործարքի մասին հաշվետվություն՝ Օրենքի 8-րդ հոդվածով սահմանված ձևով, կարգով և ժամկետներում: Պետական մարմինները գույքը սառեցնելու (դրանց վրա կալանք կամ արգելանք դնելու կամ կասեցնելու) դեպքում պետք է դրա մասին անմիջապես տեղեկացնեն Լիազոր մարմնին՝ Օրենքով սահմանված կարգով:

9. Գույքի հասանելիության արգելման նպատակով, Օրենքով սահմանված հաշվետվություն տրամադրող անձինք պետք է.

ա) Հաճախորդի կոնտրագենտների (գործարքի մյուս կողմի), անուն, ազգանունները/անվանումները համադրեն ահաբեկչության կամ զանգվածային

ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց և կազմակերպությունների համապատասխան տվյալների հետ:

Համադրումները կարող են իրականացվել ցանկացած եղանակով, այդ թվում՝ Լիազոր մարմնի պաշտոնական կայքէջում տեղադրված որոնման գործիքի միջոցով ([www.cba.am](http://www.cba.am)) կամ Լիազոր մարմնի կողմից մշակված համեմատական ալգորիթմի ավտոմատ ծրագրային համակարգով:

բ) Հաճախորդի կոնտրագենտների (գործարքի մյուս կողմի) անուն, ազգանունների/անվանումների և ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց և կազմակերպությունների համապատասխան տվյալների համեմատման արդյունքում համադրելի տվյալներ (ներառյալ՝ Լիազոր մարմնի կողմից սահմանված նվազագույն քանակի նիշերի համընկմամբ) հայտնաբերելու դեպքում պահանջեն Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվող նույնականացման տվյալներ հաճախորդի կոնտրագենտների (գործարքի մյուս կողմի) վերաբերյալ,

գ) Հաճախորդի կոնտրագենտների (գործարքի մյուս կողմի) նույնականացման տվյալների և ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց և կազմակերպությունների նույնականացման տվյալների համընկում (ներառյալ՝ Լիազոր մարմնի կողմից սահմանված նվազագույն քանակի նիշերի համընկմամբ) հայտնաբերելու դեպքում բացառեն (մերժեն, չթույլատրեն) գույքի հասանելիությունը ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց և կազմակերպություններին:

Հաշվետվություն տրամադրող անձինք ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց և կազմակերպություններին գույք, տնտեսական ռեսուրսներ, ֆինանսական կամ հարակից ծառայություններ հասանելի դարձնելն արգելելու դեպքում պետք է Լիազոր մարմնին տրամադրեն կասկածելի գործարքի մասին հաշվետվություն՝ Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն:

#### **Գլուխ 4. Ահաբեկչության հետ կապված անձանց և կազմակերպությունների սառեցված գույքի հաշվին վճարումներ կատարելու ընթացակարգը**

10. Ահաբեկչության հետ կապված անձինք և կազմակերպությունները իրավունք ունեն Լիազոր մարմնից հասանելիություն պահանջել սառեցված գույքին

այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է հիմնական կարիքների, որոշակի տեսակի վճարումների, ծախսերի ու սպասարկման վճարների կամ չնախատեսված ծախսերի կատարման համար: Նշվածների թվին են պատկանում.

ա) Անհրաժեշտ հիմնական կարիքների ծախսերը, ներառյալ՝ սննդի, վարձակալության, հիփոթեքի, դեղորայքի և բուժման, հարկերի, ապահովագրավճարների, կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, ինչպես նաև մասնագիտական, այդ թվում՝ իրավաբանական ծառայությունների դիմաց բացառապես ողջամիտ վճարների, սառեցված գույքի պահպանման և սպասարկման հետ կապված ծախսերը,

բ) Անհրաժեշտ չնախատեսված ծախսերը:

11. ՄԱԿ ԱԽ բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերով ահաբեկչության հետ կապված անձանց և կազմակերպությունների սառեցված գույքի հաշվին սույն ուղեցույցի 10-րդ կետի «ա» ենթակետով սահմանված ծախսերի դիմաց վճարումները նրանց հաշիվներից կատարվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի բնագավառում լիազորված մարմնի կողմից ՄԱԿ ԱԽ համապատասխան հանձնաժողովին ուղարկված ծանուցման ստացման օրվանից ՄԱԿ ԱԽ կողմից սահմանված ժամկետում մերժում չստանալու դեպքում, իսկ նույն կետի «բ» ենթակետով սահմանված ծախսերի դիմաց վճարումները կատարվում են ծանուցման հիման վրա ՄԱԿ ԱԽ համապատասխան հանձնաժողովի դրական եզրակացությունը ստանալու դեպքում:

12. Լիազոր մարմնի նախաձեռնությամբ կամ օտարերկրյա իրավասու մարմինների խնդրանքի հիման վրա կազմված ցանկերով ահաբեկչության հետ կապված անձանց և կազմակերպությունների սառեցված գույքի հաշվին սույն ուղեցույցի 10-րդ կետով սահմանված ծախսերի դիմաց վճարումները նրանց հաշիվներից կատարվում են Լիազոր մարմնի կողմից դրական եզրակացություն տրվելու դեպքում:

13. Ահաբեկչության հետ կապված անձինք և կազմակերպությունները իրենց սառեցված գույքի հաշվին ծախսերի դիմաց վճարումները թույլատրվելու նպատակով դիմում են Լիազոր մարմնին՝ ներկայացնելով սույն ուղեցույցի Հավելված 1-ով սահմանված օրինակելի ձևի դիմում (այսուհետ՝ Դիմում), որին կարող են կցվել Դիմումը հիմնավորող փաստաթղթեր:

14. Լիազոր մարմինն ներկայացված Դիմումը վերադարձվում է ոչ ամբողջական կամ թերի լրացված լինելու դեպքում: Սույն կետի իմաստով Դիմումը համարվում է ոչ ամբողջական կամ թերի, եթե չի պարունակում սույն ուղեցույցի Հավելված 1-ով սահմանված՝ դիմումատուին վերաբերող բոլոր տեղեկությունները: Սույն կետում նշված հիմքով Դիմումի վերադարձման դեպքում դիմումատուն կարող է Լիազոր մարմինն կրկին ներկայացնել Դիմումը՝ վերացնելով Լիազոր մարմնի կողմից նշված թերությունները:

15. Լիազոր մարմինն իրավունք ունի պահանջել ներկայացնել Դիմումը հիմնավորող լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:

16. ՄԱԿ ԱԽ բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերով ահաբեկչության հետ կապված անձանց կամ կազմակերպությունների սառեցված գույքի հաշվին սույն ուղեցույցի 10-րդ կետով սահմանված ծախսերի դիմաց վճարումները նրանց հաշիվներից կատարելու վերաբերյալ Դիմումը և այն հիմնավորող ամբողջական փաստաթղթերն ու տեղեկությունները ստանալուց հետո Լիազոր մարմինը միջնորդում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի բնագավառում լիազորված մարմինն՝ ՄԱԿ ԱԽ համապատասխան հանձնաժողովին՝ վերջինիս ուղեցույցերով սահմանված կարգով ծանուցում ուղարկելու խնդրանքով:

17. Լիազոր մարմնի նախաձեռնությամբ կամ օտարերկրյա իրավասու մարմինների խնդրանքի հիման վրա կազմված ցանկերով ահաբեկչության հետ կապված անձանց և կազմակերպությունների սառեցված գույքի հաշվին սույն ուղեցույցի 10-րդ կետով սահմանված ծախսերի դիմաց վճարումները նրանց հաշիվներից կատարելու վերաբերյալ Դիմումը և այն հիմնավորող ամբողջական փաստաթղթերն ու տեղեկությունները ստանալուց հետո Լիազոր մարմինը տասնհինգօրյա ժամկետում որոշում է կայացնում Դիմումը բավարարելու կամ մերժելու մասին: Նշված տասնհինգօրյա ժամկետը կարող է երկարաձգվել ոչ ավել, քան մեկ ամսով, եթե, լրացուցիչ տեղեկությունների ձեռք բերման անհրաժեշտությունից ելնելով, Լիազոր մարմինը հարցում(ներ) է կատարում այլ, այդ թվում՝ օտարերկրյա իրավասու մարմիններին: Ժամկետի երկարաձգման մասին Լիազոր մարմինը ծանուցում է դիմումատուին:

18. Դիմումի վերաբերյալ սույն ուղեցույցի 11-րդ կետով նախատեսված կարգով ՄԱԿ ԱԽ համապատասխան հանձնաժողովից մերժում չստանալու կամ դրական եզրակացություն ստանալու կամ սույն ուղեցույցի 12-րդ կետով նախատեսված

կարգով Լիազոր մարմնի կողմից Դիմումի վերաբերյալ դրական կամ բացասական եզրակացություն տրվելու օրվանից երկօրյա ժամկետում Լիազոր մարմինը դիմումատուին ծանուցում է արդյունքների մասին: Ընդ որում, Դիմումը բավարարվելու դեպքում ծանուցմամբ հստակ նշվում են հասանելիությունը թույլատրված գույքի տեղորոշիչ տվյալները, կազմը և չափը (գումարը), տրամադրման կարգը և եղանակը, օգտագործման նպատակ(ներ)ը, և ծանուցման մեկ օրինակն ուղարկվում է Օրենքով սահմանված՝ համապատասխան հաշվետվություն տրամադրող անձանց կամ պետական մարմիններին: Նշված ծանուցման հիման վրա Օրենքով սահմանված հաշվետվություն տրամադրող անձինք և պետական մարմիններն ապահովում են ծանուցմամբ սահմանված գույքի հասանելիությունը:

19. Անձը, ում Դիմումը մերժվել է, կարող է կրկին դիմել Լիազոր մարմնին իր սառեցված գույքի հաշվին ծախսերի դիմաց վճարումներ թույլատրվելու հարցով, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, որոնք վկայում են այն մասին, որ անձը բավարարում է այդպիսի վճարումներ ստանալու համար սահմանված պայմաններին:

20. Լիազոր մարմինը սույն ուղեցույցի 10-րդ կետով սահմանված ծախսերի դիմաց վճարումները կատարելու վերաբերյալ Օրենքով սահմանված հաշվետվություն տրամադրող անձանցից և պետական մարմիններից հավաքագրում է տեղեկատվություն՝ գույքի օգտագործման մասին:

21. ՄԱԿ ԱԽ բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերով ահաբեկչության հետ կապված անձանց և կազմակերպությունների սառեցված գույքի հաշվին սույն ուղեցույցի 10-րդ կետի «բ» ենթակետով սահմանված ծախսերի դիմաց վճարումներ իրականացվելու դեպքում Լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի բնագավառում լիազորված մարմնի միջոցով ՄԱԿ ԱԽ համապատասխան հանձնաժողովին ծանուցում է գույքի օգտագործման մասին:

**Գլուխ 5. Զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց և կազմակերպությունների սառեցված գույքը համալրելու և դրա հաշվին վճարումներ կատարելու ընթացակարգը**

22. Օրենքով սահմանված հաշվետվություն տրամադրող անձինք կարող են թույլատրել զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց և կազմակերպությունների սառեցված գույքի համալրումը հետևյալ տեսակի մուտքագրումների միջոցով.

ա) Հաշվեգրման ենթակա տոկոսներ կամ այլ եկամուտներ,

բ) Պայմանագրերի, համաձայնագրերի կամ այլ պարտավորությունների դիմաց ստացվող վճարումներ, որոնց դիմաց վճարման պարտավորությունը առաջացել է մինչև գույքի՝ սառեցման ենթակա դառնալը:

23. Զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց և կազմակերպությունների սառեցված հաշիվներին սույն ուղեցույցի 22-րդ կետով սահմանված մուտքագրումները սառեցված գույք են:

24. Ի հավելումն սույն ուղեցույցի 10-րդ կետով սահմանված վճարումների, զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձինք Լիազոր մարմնի համաձայնությամբ կարող են կատարել նաև մինչև ցանկերում ընդգրկվելու պահին առաջացած պայմանագրային պարտավորությունների դիմաց վճարումներ՝ պայմանով, որ.

ա) Պայմանագիրը կապված չէ ՄԱԿ ԱԽ 2231 կամ դրան հաջորդող բանաձևերով արգելված առարկաների, նյութերի, սարքավորումների, ապրանքների, տեխնոլոգիաների, աջակցության, ուսուցման, ֆինանսական օժանդակության, ներդրումների, միջնորդության կամ ծառայությունների հետ,

բ) Վճարումն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի կատարվում ՄԱԿ ԱԽ 2231 կամ դրան հաջորդող բանաձևերով ցուցակված որևէ անձի կամ կազմակերպության,

գ) Լիազոր մարմնի միջնորդությամբ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի բնագավառում լիազորված մարմինը վճարումը թույլատրելից տաս աշխատանքային օր առաջ այդ մասին ծանուցում է ուղարկել ՄԱԿ ԱԽ համապատասխան հանձնաժողովին՝ վերջինի ուղեցույցերով սահմանված կարգով:

25.Սույն ուղեցույցի 24-րդ կետով նախատեսված վճարումների կատարման համար սառեցված գույքին հասանելիություն տրվում է սույն ուղեցույցի 5-րդ գլխում սահմանված ընթացակարգով:

## Հավելված 1

**Ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց և կազմակերպությունների գույքի սառեցման, սառեցված գույքին հասանելիության ապահովման և հարակից գործողությունների վերաբերյալ ուղեցույցի**

### ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

**Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն սահմանված և Լիազոր մարմնի նախաձեռնությամբ կամ օտարերկրյա իրավասու մարմինների խնդրանքի հիման վրա կազմված ցանկերում ներառված անձանց և կազմակերպությունների սառեցված գույքի հաշվին ծախսերի դիմաց վճարումներ թույլատրվելու դիմումի**

#### 1. Դիմումի առարկան

Խնդրում ենք նշել այն ծախսի տեսակը, որի դիմաց խնդրարկվում է սառեցված գույքի հաշվին վճարումը

- Անհրաժեշտ հիմնական ծախսեր, մասնավորապես.
  - o Սննդի ծախսեր
  - o Վարձակալության ծախսեր
  - o Հիփոթեքի ծախսեր
  - o Դեղորայքի և բուժման ծախսեր
  - o Հարկերի վճարում
  - o Ապահովագրավճարի վճարում
  - o Կոմունալ ծառայությունների դիմաց վճարում
  - o Մասնագիտական, այդ թվում՝ իրավաբանական ծառայությունների դիմաց վճարում
  - o Սառեցված գույքի պահպանման և սպասարկման հետ կապված ծախսեր
- Անհրաժեշտ չնախատեսված ծախսեր, մասնավորապես.

---

(ներկայացնել անհրաժեշտ չնախատեսված ծախսերի հակիրճ նկարագիրը)

□ Պայմանագրային պարտավորությունների դիմաց վճարումներ

(ներկայացնել վճարումների հակիրճ նկարագիրը)

## 2. Դիմումատուի մասին տեղեկություններ

### 1) Ֆիզիկական անձանց համար

Անունը, ազգանունը /այնպես, ինչպես ներառված է ցանկում/	
Անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը և տրամադրման տարին, ամիսը, ամսաթիվը	
Ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը	
Ծննդյան վայրը /քաղաք/շրջան/երկիր/	
Քաղաքացիությունը	Ներկա
	Նախկին /ներառյալ ամսաթվերը/
Հաշվառման հասցեն	Հիմնական հասցեն /քաղաք/շրջան/երկիր/
	Այլ հասցեներ /նախկին/ ներկայիս/

### 2). Իրավաբանական անձանց համար

Անվանումը /այնպես, ինչպես ներառված է ցանկում/	
Կարճ անվանումը կամ հապավումը	
Անհատականացման (հարկ վճարողի հաշվառման) համարը	

Գտնվելու վայրը	Ներկա	
	Նախկին, եթե առկա է	
Այլ տեղեկություններ		

### 3. Սառեցված գույքի հաշվին ծախսերի դիմաց խնդրարկվող վճարման բնութագրիչները

Խնդրում ենք մանրամասն ներկայացնել սառեցված գույքի հաշվին ծախսերի դիմաց խնդրարկվող վճարման բնութագրիչները (անհրաժեշտության դեպքում կարող եք կցել փաստաթղթեր)

Ստացող (անունը և հասցեն)

\_\_\_\_\_

Ստացողի բանկային տվյալները (բանկի անվանումը, բանկի հասցեն և հաշվեհամարը)

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

Վճարման ենթակա գումարի չափը

\_\_\_\_\_

Վճարումների քանակը

\_\_\_\_\_

Վճարման սկզբնաժամկետը

\_\_\_\_\_

Վճարման եղանակը (փոխանցում բանկային հաշվին/ուղղակի դեբետավորում)

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

Այլ տեղեկատվություն

\_\_\_\_\_

### 4. Սառեցված գույքի հաշվին ծախսերի դիմաց վճարումներ ստանալու նախկին դիմումներ

Արդյո՞ք առկա են նույն անձի կամ կազմակերպության սառեցված գույքի հաշվին

Ճախսերի դիմաց վճարումներ ստանալու այլ դիմումներ

Այո  Ոչ

Եթե այո, խնդրում ենք մանրամասնել \_\_\_\_\_

**5. Սառեցված գույքի հաշվին ծախսերի դիմաց վճարումներ ստանալու հիմնավորումը**

Խնդրում ենք մանրամասն ներկայացնել սառեցված գույքի հաշվին ծախսերի դիմաց վճարումներ ստանալու հիմնավորումը (անհրաժեշտության դեպքում կարող եք կցել փաստաթղթեր)

**6. Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկ**

Խնդրում ենք նշել փաստաթղթի անվանումը և էջերի քանակը

**7. Դիմումի ներկայացման վերաբերյալ տվյալներ**

Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն սահմանված և/կամ Լիազոր մարմնի նախաձեռնությամբ կամ օտարերկրյա իրավասու մարմինների խնդրանքի հիման վրա կազմված ցանկերում ----- համարի ներքո ներառված -----ի սառեցված գույքի հաշվին ծախսերի դիմաց վճարումներ ստանալու դիմումը ներկայացվել է ----/----/-----թ.:

-----  
(ստորագրություն)